

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը հայտարարում է
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության
ժամանակավոր թափուր պաշտոններ զբաղեցնելու մասին

ՀՀ Լոռու մարզպետարանի Թումանյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության
մասնագետի (65-4.3-37) ժամանակավոր թափուր պաշտոններ

Գործակալության մասնագետը՝

Գործակալության պետի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ, ներկայացնում է առաջարկություններ սոցիալական աջակցության ծրագրերի ձևավորման և դրանց կատարելագործման վերաբերյալ, պարզում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը, ներկայացնում է առաջարկություն տվյալ ընտանիքին աջակցություն տրամադրելու վերաբերյալ, սոցիալական աջակցություն հայցող անձին օգնում է հայտնաբերելու և օգտագործելու դժվարություններ հաղթահարելու իր կարողությունը, միջոցներ է ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց, ընտանիքներին և աջակցում նրանց դիմելու տարածքային մարմին, Գործակալության պետի հանձնարարությամբ ապահովում է իր սպասարկման տարածքում բնակվող անձանց՝ սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ նպաստ տրամադրելը, ինչպես նաև տեղեկատվական ենթահամակարգերում ընտանիքների (անձանց) մասին ամրագրված տվյալների հավաստիությունը, մասնակցում է Գործակալություն դիմած բոլոր անձանց համար սոցիալական ծառայությունների, այդ թվում՝ նպաստի տրամադրման համար հավասար պայմանների ապահովման աշխատանքներին:

Գործակալություն դիմած քաղաքացիներին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն, Գործակալության պետի հանձնարարությամբ մասնակցում է Գործակալության աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև Գործակալության պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- առնվազն միջնակարգ կրթություն.
- սույն պաշտոնի հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների տիրապետում

Դիմող ՀՀ քաղաքացիները Լոռու Մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝
գրավոր դիմում

- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները,
աշխատանքային գրքույկի պատճենը (ունենալու դեպքում),
- արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք
- մեկ գունավոր լուսանկար՝ 3X4 սմ չափսի
- անձնագրի պատճենը

Պայմանագրի գործողության ժամկետն է՝ 08.11.2018թ.

Աշխատավարձի չափը՝ 82675 ՀՀ դրամ

Փաստաթղթերն ընդունվում են՝ ա/թ հոկտեմբերի 30-ից

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 01.11.2018թ.

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող եք
դիմել ՀՀ Լոռու մարզպետարան (ք. Վանաձոր, Հայքի հրապարակ, հեռ.2-10-24, էլ.
հասցե՝lori.andznakazm@mta.gov.am)